ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՓՈՔՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ. 00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

МЕСРОП ВАРДАНОВИЧ СААКЯН

ЭСТЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РЕВАЛОРИЗАЦИИ МАЛОГО ЦЕНТРА ЕРЕВАНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности 18.00.01-" Архитектура "

ЕРЕВАН 2023

Ատենախոության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար' ճարտ. թեկնածու, պրոֆեսոր **Ա. Ա. Ալոյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ' ճարտ. դոկտոր, պրոֆեսոր **Ս. Ա. Թովմասյան**
ճարտ. թեկն., դոցենտ **Ն. Գ. Պետրոսյան**

Առաջատար կազմակերպություն' **«Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ**

Պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի օգոստոսի 28-ին ժամը 14.00-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈԿ-ի «ճարտարապետություն» 029 մասնագիտական խորհրդում:

Հասցեն' 0009, ք. Երևան, Տերյան փ. 105:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում:

Հասցեն' 0079, ք. Երևան Մառի փող. 17/1:

Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում'www.nuaca.am Սեղմագիրն առաքված է 2023 թվականի հուլիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար' ճարտ. դոկտոր, պրոֆեսոր

Լ. Վ. Կիրակոսյան

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и строительства Армении

Научный руководитель: кандидат арх., профессор **А. А. Алоян**

Официальные оппоненты: доктор арх., профессор **С. А. Товмасян**
канд. арх., доцент **Н. Г. Петросян**

Ведущая организация: **"Национальный музей-институт архитектуры имени Александра Таманяна" ГНКО**

Защита состоится 28 августа 2023 года в 14.00 часов на заседании специализированного совета 029 - «Архитектура» ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении (НУАСА).

Адрес: 0009, г. Ереван, ул. Теряна 105.

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра 17/1.

С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am Автореферат разослан 7-го июля 2023г.

Ученый секретарь Специализированного совета: доктор арх., профессор

Л. В. Киракосян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետական միջավայրի վերարժևորումն (ֆր.՝ revalorisation) այսօր հրատապ է, քանի որ նոր ճարտարապետական համալիրների ստեղծման հետ մեկտեղ առաջնահերթ խնդիրներից է նաև գոյություն ունեցող շենքերի և շինությունների արդի պահանջներին համապատասխանեցումը, հին պատմական կառույցների վերականգնումը՝ հաշվի առնելով գործառնական պատշաճ հագեցվածությունը և տարածքի հատակագծատարածական կառուցվածքի ամբողջականության ապահովումը: Վերարժևորումը պատմական կենտրոնի կամ քաղաքի առանձին հատվածի վերակառուցման ծրագիր է՝ դրա ճարտարապետական, հորինվածքային և գործառնական արժեքների վերակենդանացման մի միասնական գաղափարով: Ժառանգության օգտագործման այս մեթոդի միջոցով ավելի մեծ նշանակություն և գործառնական արժեք է տրվում կարևոր հուշարձանների վերականգնմանը, դիտարժան վայրերի և շենքերի վերակառուցմանը և արդիականացմանը:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում քաղաքի և կենտրոնի զարգացման համար զանազան պետական և տեղական ինքնավարության (մունիցիպալ) ծրագրային, օրենսդրական, նախագծային փաստաթղթերի մշակմանը: 1998թ. ընդունվեց «ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին», նույն թվականին «ՀՀ օրենքը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», 2002թ. «ՀՀ Հողային օրենսգիրք», որոնց կիրառումը համընկավ Հայաստանի բնակավայրերի նախագծման և վերակառուցման նոր փուլի մեկնարկի հետ: Առաջին հերթին պետք է առանձնացնել ք. Երևանի գլխավոր հատակագծի նախագիծը (2005 թ.)՝ մշակված որպես մայրաքաղաքի՝ մինչև 2020 թ. տարածքահատակագծային և տարածական զարգացման հիմք: 2006 թ. հաստատվել է ք. Երևանի կենտրոնի գոտիավորման և կառուցապատման նախագիծը: 2006 թվականից հետո մշակվել են կենտրոնի տարբեր հատվածների կառուցապատման նախագծեր: Պարբերաբար քաղաքապետարանում մշակվում են քաղաքի զարգացման ծրագրեր: 2013 թ. մշակվել և չի հաստատվել «Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի հիմքում «Փոքր կենտրոնի» առանձնահատկություններից բխող օրենսդրական և քաղաքաշինական պլանավորման փաստաթղթերով ամրագրվող նորմերի սահմանումն է:

Վերջին տարիներին որոշակի փորձեր են արվել ք. Երևանի կենտրոնի զարգացման խնդիրների պրակտիկ իրականացման ուղղությամբ, այն է՝ «Հին Երևան», «Երևանի 2800 ամյակի այգի», «33-րդ թաղամաս», Կոնդի

վերակառուցման ծրագրերը, Հյուսիսային և Գլխավոր պողոտաների կառուցումը, Կասկադի զարգացման շարունակությունը, քաղաքապետարանի և այլ շենքերի ավարտը և այլն: Այս գործողությունները զուգորդվեցին առանձին պատմական շենքերի ոչնչացումով և գոյություն ունեցող միջավայրի գեղագիտական որակների արժեզրկմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ այսօր ևս կենտրոնի միջավայրի զարգացման խնդիրները լուծվում են հիմնականում առանձին սահմանափակ, լոկալ տարածքներում որոշակի հարցերի կամ օբյեկտների համար, ինքնաբուխ կերպով, առանձին կառուցապատումների ձևով՝ բոլորովին հաշվի չառնելով միջավայրային համալիր մոտեցումները, ճարտարապետական արժեքները, գեղաղգիտական ձևավորման հարցերը և միջազգային փորձը: Քաղաքային միջավայրի վերարժևորման արտասահմանյան արդի փորձից հատկանշական են Դամասկոսի (Սիրիա), Ֆեզի (Մարոկկո), Վիլնյուսի (Լիտվա), Զաբիդի (Եմեն), Ջեզյորանիի (Վարմիա՝ Լեհաստան), «Ռոտերմաննի քաղաքի» (Տալլին՝ Էստոնիա) վերարժևորման ծրագրերը: Դամասկոսի պատմական միջավայրի վերականգնման, պահպանման և զարգացման խնդիրների վերաբերյալ իրականացվել են բազմաթիվ իրավական կարգավորման և նախագծային աշխատանքներ, որոնք ուղղված են փոփոխվող պահանջների, կարիքների, հնարավորությունների բավարարելմանը և նոր պայմանների ստեղծմանը:

Վերարժևորման հարցերին նվիրված են Կ. Ռոջերսոնի, Գ. Վիսսերի, Ռ. Չեպայտենեի, Ա. Բառաբանովի, Կ. Չեչուլինսկայայի և այլ հեղինակների վերջին տարիների աշխատությունները: Քաղաքների կենտրոնի ճարտարապետական միջավայրի հիմնարար խնդիրները ներկայացված են Ք. Լինչի, Վ. Գլազիչևի, Ա. Գուտնովի, Վ. Լավրովի և այլոց աշխատություններում: Ք. Երևանի քաղաքաշինության և ճարտարապետության զարգացման խնդիրներով զբաղվել են Յու. Սաֆարյանը, Ա. Ալոյանը, Դ. Քերթմենջյանը, Լ. Կիրակոսյանը, Է. Հարությունյանը, Ս. Թովմասյանը, Մ. Գասպարյանը, Կ. Ազատյանը, Ն. Պետրոսյանը, Աշ. Գրիգորյանը, Ա. Առուստամյանը, Հ. Պետրոսյանը և ուրիշներ:

Վերը նշված տեսական, նախագծային և ծրագրային աշխատություններում բացահայտվում և առաջադրվում են քաղաքային կենտրոնների զարգացման դինամիկան, միջավայրի ճարտարապետական դիզայնի և միջավայրային մոտեցման գաղափարը և ամբողջականությունը: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ ք. Երևանի «Փոքր կենտրոնի» արդի վերակազմակերպման առանձին հարցերը գործնականում բավարար մակարդակով դեռ չեն լուծվում, քանի որ միասնական մոտեցումները գեղագիտական որակի համալիր գնահատման, բարելավման և կատարելագործման վերաբերյալ դեռ թերի են լուծվում: Ուստի ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի համալիր

վերարժևորման արդի խնդիրների գիտականորեն հիմնավորված ուղիների մշակումը և համալիր լուծման անհրաժեշտությունն այսօր ակնհայտ է:

Հետազոտության նպատակն է Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի զարգացման արդի խնդիրների բացահայտումը և գեղագիտական որակի բարելավման համալիր վերարժևորման հիմնական ուղիների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Հետազոտության հիմնական խնդիրները.

- Վերլուծել խոշոր քաղաքների կենտրոնների ճարտարապետատարածական զարգացման և վերարժևորման գեղագիտական խնդիրների լուծման արտասահմանյան փորձը:
- Ուսումնասիրել ժամանակագրական տարբեր փուլերում Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» և պատմական միջավայրի զարգացման պայմանները և ճարտարապետական առանձնահատկությունները:
- Բացահայտել Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետահատակագծային զարգացման ընթացքում գեղագիտական որակի վերարժևորման հիմնական սկզբունքները և օրինաչափությունները:
- Մշակել առաջարկություններ Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական զարգացման և գեղագիտական որակի բարելավման համալիր վերարժևորման հիմնական ուղիների վերաբերյալ:

Հետազոտության օբյեկտը՝ Երևան քաղաքի «Փոքր կենտրոնը»:

Հետազոտության առարկան՝ քաղաքների կենտրոնների ճարտարապետատարածական միջավայրի վերարժևորման, ճարտարապետական դիզայնի և միջավայրային մոտեցումների կիրառման արդի խնդիրները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Մասնագիտական գրականության և արխիվային նյութերի, փաստաթղթերի, իրականացված և չիրականացված նախագծերի, քաղաքային ծրագրերի հավաքագրում և ամփոփում, համակարգային մոտեցում, համեմատական, իրավիճակային վերլուծություններ:

Ժամանակագրական և աշխարհագրական սահմանները

Ատենախոսությունը վերաբերվում է XX-XXI դարերի ժամանակաշրջանի քաղաք Երևանի «Փոքր կենտրոնի» զարգացման և պատմական միջավայրի պահպանման և վերակառուցման խնդիրներին:

Հետազոտության նորույթը

Առաջին անգամ Երևան քաղաքի համար՝

- առանձնացվել են «Փոքր կենտրոնի» արդի իրավիճակում վերարժևորման հիմնական ուղղությունները,

- բացահայտվել են «Փոքր կենտրոնի» ճարտարապետահատակագծային զարգացման ընթացքում վերարժևորման վրա ազդող հիմնական գործոնները, սկզբունքները և օրինաչափությունները,
- մշակվել են «Փոքր կենտրոնի» բազմագործոն վերլուծության մեթոդաբանությունը, դրա հիման վրա՝ վերարժևորման համալիր սկզբունքների վերաբերյալ առաջարկությունները:

Պրակտիկ արժեքը

Արդյունքները կնպաստեն Երևանի կենտրոնի միջուկի նախագծային և վերակառուցման գործընթացի կանոնակարգմանը:

Արդյունքների հնարավոր ներդրումը

Ատենախոսության նյութը հնարավոր կլինի ներդնել ուսանողական դասընթացային ծրագրերի ստեղծման հիմքում, ինչպես նաև մեթոդաբանական ձեռնարկ կհանդիսանա նման նախագծերի ստեղծման համար:

Պաշտպանության են ներկայացվում.

- Ժամանակագրական տարբեր փուլերում Երևանի կենտրոնի և պատմական միջավայրի վերարժևորման առանձնահատկությունները:
- Խոշոր քաղաքների կենտրոնների վերարժևորման բազմագործոն վերլուծության մեթոդաբանությունը:
- Խոշոր քաղաքների կենտրոնների կամ քաղաքի այլ հատվածների ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի վերարժևորման հիմնական ուղղությունները:

Հրատարակումներ

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 8 գիտական հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը կազմված է 135 էջ տեքստային մասից և հավելվածներից: Տեքստային մասը ներառում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություն և 102 անուն օգտագործված գրականության ցանկ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

<u>Ներածության</u> մեջ ներկայացվում են թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, գիտական և գործնական նշանակությունը:

<u>Առաջին գլխում</u> քննարկվել են քաղաքների ճարտարապետատարածական զարգացման ուղիները և վերարժևորման փորձը: Ցույց է տրվել, որ վերարժևորումը մի միասնական գաղափարով ներառում է օբյեկտների վերականգնման և վերակառուցման աշխատանքներ՝ ուղղված ճարտարապետական,

հորինվածքային և գործառնական արժեքների «վերակենդանացմանը», միջավայրի ներդաշնակության ստեղծմանը և ապահովմանը: Վելուծության արդյունքում արձանագրվել է, որ վերարժևորումը քաղաքային միջավայրում պատմական կառույցների և տարածքների, ինչպես նաև խարխուլ կամ ժամանակակից գործառնական պահանջներին չհամապատասխանող շենքերի պահպանման և վերաօգտագործման ամենաարդյունավետ ուղիներից մեկն է:

Արտասահմանյան փորձի վերլուծությամբ առանձնացվել են միջավայրի վերարժևորման գործընթացի հիմնական սահմանումներն ու մոտեցումները.

- վերականգնման համար՝ «Վենետիկի կանոնադրություն», «Եվրոպական կանոնադրություն», ICOMOS,
- վերակառուցման համար՝ հարմարվողական վերաօգտագործում, փոխակերպում, վերահարմարվողականություն, ռենովացիա, ռեգեներացիա, ռեվիտալիզացիա, ֆասադիզմ:

Առանձնացվել են նաև յուրաքանչյուր տարածքի կամ օբյեկտի գեղագիտական որակի վերարժևորման արժեքի չորս հիմնական բաղադրիչները՝ վավերականությունը, պատմական, արտաքին և ավելացված արժեքները, որոնք դրսևորվում են օբյեկտների առանձնահատկությունների ընկալման, հասարակական կյանքում նրանց դերի կարևորության մեջ: Դրանց միջոցով տրվում են օբյեկտի արժեքի պատմական տեղեկատվական և ձևի որակական (գեղագիտական) հիմնական չափանիշները:

- Վավերականությունը բնութագրվում է շինանյութերի, տեխնոլոգիաների իսկությամբ, ինքնատիպությամբ, սկզբնական ձևին համապատասխանությամբ:
- Պատմական արժեքը բնութագրվում է օբյեկտի պատմական իրադարձությունների հետ կապի և անցյալի ուսումնասիրության վերաբերյալ տեղեկատվության աղբյուր լինելու ունակությամբ:
- Արտաքին արժեքը բնութագրվում է տեսանելի հետքերի առկայությամբ, որոնք առաջացել են տարբեր իրադարձությունների արդյունքում:
- Ավելացված արժեքը բնութագրվում է օբյեկտի գոյության ընթացքում ձեռք բերված հատկանիշներով, հասարակության կյանքում նրա ունեցած նշանակությամբ՝ որպես հիշողության վայր և խորհրդանշական արժեք:

Նշված բաղադրիչները գեղագիտական որակի ձևավորման և վերարժևորման հիմնական գործոններից են, որոնց դերը քաղաքային միջավայրի, ժամանակի և տարածության մեջ փոփոխվելու ընթացքում շատ կարևոր է, եթե ոչ՝ որոշիչ:

Քաղաքային միջավայրի վերարժևորման գործնականում իրականացված փորձի ուսումնասիրության արդյունքում ցույց է տրվել, որ գեղագիտական որակի

բարելավման առանձին օրինակները իրականացվում են առանց հաշվի առնելու գործոնների ամբողջ համալիրը, այն է՝ քաղաքային լանդշաֆտի առանձնահատկությունները, գործառույթների փոփոխման ֆիզիկական և բարոյական գործոնները, միջավայրի պատմական արժեքը և տարածական զարգացման հեռանկարները, սեմիոտիկ առանձնահատկությունները բերում է միակողմանի լուծումների, չի արտահայտում ժամանակի ընդհանուր ոգին և չի նպաստում ընդհանուր միասնական դիմագծի ձևավորմանը: Այդ առումով գեղագիտական որակի վերարժևորման համար առավել կարևոր է բազմակողմանի գործոնների առկայության բացահայտումը և համալիր ծրագրերի մշակումը:

Ք. Երևանի կենտրոնը, ինչպես նաև ամբողջ քաղաքի միջավայրը, վերջին 100 ամյակում անցել է թռիչքային զարգացման բարդ ուղի՝ գավառական փոքր քաղաքից մինչև անկախ հանրապետության մայրաքաղաք, որի մշտադիտարկման և զարգացման հիմնահարցերից են միջավայրի համալիր բարելավման հիմնախնդիրները:

Վերջին տարիներին ք. Երևանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում, իրականացվել են միջավայրի վերակառուցման և վերարժևորման տարբեր փորձեր: 1990-ականներին մեծ մասշտաբով ծավալված վերակառուցման աշխատանքների արդյունքում քանդվեցին պատմական կառույցներ, առանձին կառույցներ պահպանվեցին կամ տեղափոխվեցին, պահպանվեցին մի քանի հուշարձանների ճակատներ: Որպես հետևանք ասվածի՝ այսօր համարյա լիովին վերափոխվել են Շահումյանի հրապարակը՝ հարակից փողոցների կառույցներով, Պուշկինի, Աբովյանի, Տերյանի փողոցների առանձին հատվածները: Այստեղ ամբողջությամբ կամ մասնակի վերացել են ժամանակին ք. Երևանի դիմագիծը ներկայացնող պատմական կառույցները:

Փաստորեն գործընթացն իրականացվել է առանց՝ այսօր ամբողջ աշխարհում ընդունված պատմական միջավայրի հնարավորին պահպանման սկզբունքի, որի ամենաարդյունավետ ուղիներից է ճարտարապետական վերարժևորումը:

«Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի արդիականացման առավել ուշագրավ նախագծային և մի քանի առաջադրված ծրագրային առաջարկությունների շարքում կարելի է առանձնացնել «Հին Երևանը», «33-րդ թաղամասը», «Կոնդ թաղամասի վերաբերյալ առաջարկները»:

Բոլոր վերոնշված քննարկվող ծրագրերում հատկանշական է այն, որ, ի տարբերություն նախորդ տարիների գործողությունների, այստեղ այս կամ այն աստիճանի մանրամասնությամբ պահպանվել են վավերականության վերստեղծման, պատմական օբյեկտների պահպանման և նոր ավելացված

արժեքների ներմուծման ներդաշնակեցման սկզբունքները, ինչը նոր արժեքների և հասարակական կյանքի աշխուժացման լիարժեք նախադրյալների ստեղծման երաշխիք է քաղաքի կենտրոնի ճարտարապետատարածական միջավայրի զարգացման համար: «Հին Երևանի» դեպքում շեշտը դրվում է XIX-XX դարերի կերպարի պահպանման վրա, որտեղ, օգտագործելով պահպանվող հուշարձանների ճակատները, վերականգնվում են նաև քաղաքի տարբեր վայրերում քանդված արժեքավոր շենքերը: Իրականցվել են նաև լրացուցիչ հարկերի ավելացում և գործառույթների կտրուկ փոփոխություններ, ինչը պատճառաբանվում է անհրաժեշտ ներդրումներ ստանալու պահանջով: *«33-րդ թաղամասի»* ծրագրում պատմական հուշարձան-շենքերով կառուցապատումը պահպանված է տարածքի պարագծով՝ նոր գործառույթները տեղավորելով ներքին տարածքներում: Պետք է նշել, որ այնուամենայնիվ ներքին տարածքներում իրացման տակ են մնում մի շարք դիտարժան կառույցներ: «*Կոնդի»* վերարժևորման մրցույթում ամենաբարձր գնահատականն ստացած հայեցակարգում նույնպես պահպանվում են ինչպես պատմական կառուցապատումը, այնպես էլ փողոցների գոյություն ունեցող գծագրությունը:

«Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի արդիականացման ներկայիս իրավիճակում պատմական կառույցների վերակառուցման աշխատանքները հիմնականում ուղեկցվում են նոր շենքային ծավալների ու կառույցների հետ զուգորդմամբ կամ միավորմամբ՝ ստեղծելով նոր ճարտաարապետական համալիրներ:

<u>Երկրորդ գլխում</u> վերլուծվել են Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» դիմագծի ձևավորման և գեղագիտական խնդիրների լուծման առանձնահատկությունները: Ժամանակագրական տարբեր փուլերում ք. Երևանի կենտրոնի և պատմական միջավայրի զարգացման պայմանների ուսումնասիրության ընթացքում առանձնացվել են գեղագիտական կերպարի կերտման և խնդիրների լուծման առանձնահատկությունները: Ցույց են տրվել են 1924 թ. Ալեքսանդր Թամանյանի կողմից նախագծված ք. Երևանի գլխավոր հատակագծով նախանշված հատակագծային կառուցվածքի կազմավորման հիմնական գործոնները և միջավայրի գեղագիտական արտահայտչականության առանձնահատկությունները, ըստ որի ձևավորվեցին «Փոքր կենտրոնի» դիմագծի հիմնական բնութագրերը.

- քաղաքի կառուցման աշխարհագրական դիրքը՝ շրջապատված ամֆիթատրոնի ձևով, եզերված երեք բարձունքներով՝ դեպի Արարատ կողմնորոշմամբ,
- օղակաձև և շառավղաձև ուղիների կառուցվածքը,

- քաղաքի՝ բնությանը և տեղանքին համահունչ տարածքի ֆունկցիոնալ գոտիավորման առանձնահատկությունները և կառուցապատման համակարգը,
- քաղաքի գեղարվեստական կերպարի ձևավորումը՝ ապահովելով ամբողջական թաղամասերով համալիր կառուցապատում,
- միասնական քաղաքաշինական պահանջներով սահմանված շենքերի հարկայնության սահմանումը՝ հասարակական շենքերի՝ որպես երկու, երեք կամ չորս և բնակելիների՝ որպես կանոն երկու կամ երեք հարկանի,
- քաղաքային համայնապատկերում հստակ դոմինանտների առկայությունը (Կառավարության շենք, Ազգային օպերայի շենք, Արարատ լեռ),
- անսամբլայնության օգտագործումը,
- բարեկարգման, հիգիենայի և սանիտարական պայմանների ապահովումը,
- քաղաքում և դրա շուրջ կանաչ տարածությունների առատությունը (ըստ գլխավոր հատակագծի՝ քաղաքի մեկ վեցերորդ մասը),
- քաղաքում Հրազդան գետի, Հրազդանի կիրճի և Գետառ գետի առկայությունը՝ ջրվեժներով, կանաչազարդ ափերով,
- ճարտարապետական մանրամասների մշակումը,
- հայկական տարրերով հարստացրած նեոդասական ճարտարապետական ոճի կիրառումը և տարածումը:

«Փոքր կենտրոնի» զարգացման ընթացքում քաղաքային լանդշաֆտի և ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի և դիմագծի արտահայտչականության վատթարացման հիմնական գործոններն են՝ 1960-ականներից հետո բարձրահարկ տիպարային պանելային շենքերի կառուցումը, 1990-ականներից հետո չհիմնավորված և ապօրինի կառուցապատումները, կամայական վերակառուցման աշխատանքները և զանգվածային արդիականացման գործընթացով պայմանավորված հուշարձանների քանդումը:

Բացահայտվել և առաջադրվել է քաղաքային լանդշաֆտին վերաբերող վերարժևորման ենթակա օբյեկտների համակարգը, որտեղ օբյեկտները դասակարգվել են համաձայն բացահայտված պատկերային բովանդակությանը վերաբերվող ֆիզիկական ձևերի՝ ուղիների, եզրագծերի, շրջանների, հանգույցների, կողմնորոշող օբյեկտների: Հետազոտության մեջ հաշվի են առնվել նաև այնպիսի գործոններ, ինչպիսին են տարածքի սոցիալական նշանակությունը, դրա գործառույթները, պատմությունը, սեմիոտիկան՝ կապված դիրքի և տեղի ավանդույթների հետ, որոնք նույնպես ազդում են շրջակա միջավայրի բնույթի վրա: Ճարտարապետական միջավայրի հիմնական բաղադրիչներն առանձնացվել են ըստ յուրաքանչյուր տարածքի կամ օբյեկտի գնահատման չորս հիմնական

բաղադրիչների առկայության՝ իսկություն կամ վավերականացում, պատմական, արտաքին և ավելացված արժեքներ:

Վերարժևորման հիմնական օբյեկտների բազմագործոն վերլուծությունը և գեղագիտական խնդիրների լուծման առանձնահատկությունների բացահայտումը զուգորդվել են իրավիճակային պայմանների քննարկման հետ: SWOT վերլուծության օգնությամբ տրվել են առանձնացված օբյեկտների և միջավայրի այլ բաղադրիչների ճարտարապետագեղագիտական արժեքներով և միջավայրի ներդաշնակությունը որոշող հորինվածքային օրինաչափություններով պայմանավորված գեղագիտական որակի որոշման և հնարավոր հետագա բարելավման գնահատականներն ըստ գործոնների չորս հիմնական կատեգորիաների՝ ուժեղ կողմերի (Strengths), թույլ կողմերի (Weaknesses), վերարժևորման հնարավորությունների (Opportunities) և սպառնալիքների (Threats):

Տրվել են ք. Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի վերարժևորման օբյեկտների համակարգը և կառուցվածքային մոդելը (նկ. 1):



Նկ. 1. Երևանի քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի վերարժևորման օբյեկտների կառուցվածքային մոդելը

<u>Երրորդ գլխում</u> նախանշվել են ճարտարապետահատակագծային միջավայրի վերարժևորման ուղիները և գեղագիտական խնդիրների լուծման հիմնական սկզբունքները: Ամփոփելով ք. Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի արդիականացման ներկայիս իրավիճակը՝ վերակառուցման ժամանակակից միջազգային փորձի համեմատական վերլուծության արդյունքում առանձնացվել են վերարժևորման արդի փուլի հիմնական միտումները, այն է՝

- ✓ բացասական ուղղվածություն, անցանկալի՝ պատմական միջավայրի պահպանության տեսանկյունից.
  - ✓ վերակառուցում, վերափոխում, արդիականացում՝ պատմական կառույցների ամբողջական կամ մասնակի վերացման արդյունքում,
  - ✓ տարածքի ամբողջական վերափոխում՝ պատմական կառույցների հիմնովին վերացման արդյունքում,
- ընդունելի ուղղվածություն, երբ պատմական շենքերը ավերվել են կամ պահպանվել են մասնակիորեն.
  - ✓ տարածքի վերարժևորում՝ պահպանելով պատմական կառույցների միայն ճակատները և ավելացնելով շենքային նոր ծավալներ,
  - ✓ պատմության և մշակույթի օբյեկտների պահպանում՝ նոր շենքային ծավալների ու կառույցների հետ զուգորդմամբ,
  - ✓ նոր ճարտարապետական համալիրների ստեղծում, որտեղ պատմական կառույցները պահպանվում և միավորվում են նորերի հետ,
- ✓ գերադասելի ուղղվածություն.
  - պատմական ժառանգության և շրջակա միջավայրի ամբողջությամբ պահպանում և ամբողջականության վերականգնում, ամրակայում և ռեվիտալիզացիա (նկ. 2):



Նկ. 2. Երևանի քաղաքի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի արդիականացման ներկայիս իրավիճակը և վերարժևորման արդի փուլի հիմնական պայմանները, 1), 2), 3) բացասական, անցանկալի ուղղվածության, 4), 5) ընդունելի, 6) գերադասելի

Ժամանակագրական առումով բնակելի և հասարակական շենքերի շահագործման պայմանները կարելի է բնութագրել մինչև 2000-ականները կառուցված միջին և բարձր հարկայնության բնակելի շենքերի ինքնակամ վերակառուցման աշխատանքներով պայմանավորված ամբողջականության խաթարմամբ, մինչև 2000-ականները կառուցված հասարակական շենքերի ի սկզբանե նախագծված ամբողջական տեսքի պահպանմամբ, իսկ իրականացված փոփոխությունների դեպքում՝ ամբողջականության պահպանմամբ, ցածր և միջին հարկայնության բնակելի և հասարակական շենքերի հարկերի ավելացմամբ, 2000-ականներից հետո կառուցված հասարակական և բնակելի շենքերի ամբողջականության պահպանմամբ:

Առաջարկվել են միջավայրի գեղագիտական որակի վրա ազդող շենքերի և միջավայրի բաղադրիչների գեղագիտական որակի վերարժևորման հիմնական ուղղությունները:

- Այն հատվածները (շրջաններ, ուղիներ, հանգույցներ), որոնք ընդգրկում են մինչև 1960-ականների կառույցներ, ճարտարապետության և մշակույթի անշարժ հուշարձաններ, հադիսանալով «Փոքր կենտրոնի» ձևավորված հատուկ

դիմագծի արտահայտչականության հիմնական գործոնը, պահպանել և հստակեցնել ճարտարապետատարածական համակարգի իսկությունը՝ հասցնելով այնպիսի վիճակի, որ հնարավոր լինի ամբողջությամբ ընկալել տարբեր ժամանակագրական հատկանիշների, զարգացման ընթացքում ճարտարապետական հորինվածքային, կառուցողական և գեղարվեստական բնութագրիչների արտահայտչականությունը:

- Այն հատվածները, որոնք ուղղորդվում են 1960-2000-ականների կառուցապատմամբ, հասցնել այնպիսի վիճակի, որը չի ազդի «Փոքր կենտրոնի» ձևավորված հատուկ դիմագծի արտարահայտչականության, ինչպես նաև ճարտարապետության և մշակույթի անշարժ հուշարձանների ճարտարապետական և գեղագիտական արժեքի վրա և կինտեգրվի միջավայրի ամբողջականության մեջ:
- Այն հատվածները, որոնք ընդգրկում են 2000-ականներից հետո իրականացված կառուցապատում և ձևավորված միջավայր, վերարժևորումն իրականացնել ուղղված գրավչության բարձրացման նպատակին:

Մշակվել և առաջադրվել է քաղաքների կամ դրանց առանձին հատվածների ճարտարապետատարածական միջավարի գեղագիտական որակի համալիր վերարժևորման մեթոդաբանությունը: Այն հնարավորդություն է տալիս բացահայտել վերարժևորման հիմնական սկզբունքները, չափանիշները և ուղղությունները՝ կախված միջավայրի առանձնահատկություններից: Վերարժևորման մեթոդաբանությունը «Փոքր կենտրոնի» օրինակով կարող է կիրառվել տարբեր քաղաքների կամ դրանց առանձին հատվածների, ինչպես նաև պատմական կառուցապատմամբ ուղղորդված շրջանների միջավայրի գեղագիտական որակի համալիր վերարժևորման գործընթացում:

Մեթոդաբանությունն ընդգրկում է հետևյալ հիմնական գործողությունները.

I. վերարժևորման օբյեկտների բացահայտում,
II. վերարժևորման օբյեկտների գնահատում և արժևորում՝ վավերականությունը, պատմական, արտաքին, ավելացված արժեքները,
III. բազմագործոն գնահատում և իրավիճակային վերլուծություն՝ ըստ ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների, սպառնալիքների,
IV. վերարժևորում՝ ուժեղ օգտակար կողմերի միավորում և թույլ վնասակար կողմերի մեղմացում կամ վերացում (նկ. 3.):



Նկ. 3. Ճարտարապետատարածական միջավարի գեղագիտական որակի համալիր վերարժևորման մոդել

Ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են միջավայրի քաղաքային լանդշաֆտի պատկերային բովանդակությանը և ճարտարապետատարածական համակարգին վերաբերվող ֆիզիկական ձևերի բաղադրիչների գեղագիտական որակի վերարժևորման ենթակա հիմնական մակարդակները՝ ըստ կողմնորոշող օբյեկտների:

I. *Փոքր ճարտարապետական ձևերի վերարժևորում* – չափի, ձևի, տեղակայման կանոնակարգում, նոր մշակութային տարրերի և գովազդային ձևերի ներմուծում:

II. *Շենքի առանձին բաղադրիչների (դետալների) վերարժևորում* – դռների, պատուհանների, ծածկերի, բազրիքաճաղերի, տեխնիկական սարքավորումների վերափոխում և ամբողջականացում:

III. *Առանձին շենքերի վերարժևորում* – մանսարդներ, կտուրների (5-րդ ճակատի) որակի և արտաքին տեսքի բարելավում, հարկերի ավելացում կամ պակասեցում, արտաքին տեսքի փոփոխություններ:

IV. *Բակերի ամբողջական վերարժևորում* - ավտոկայանատեղիների և ավտոտնակների կանոնակարգում, կանաչ տարածությունների, ակտիվ և պասիվ հանգստի գոտիների, մանկական խաղահրապարակների միասնական կազմակերպում:

V. *Փողոցների ամբողջական վերարժևորում* – ժամանակին զանգվածային ձևով կառուցված բարձրահարկ տիպարային պանելային շենքերի փոփոխում կամ վերարժևորում:

VI. *Թաղամասի կամ ճարտարապետական համալիրի վերարժևորում* - հարակից տարածքում կազմավորված շրջանում բարձրահարկ տիպարային պանելային շենքերի կամ մեկ այլ տիպի հորինվածքը խաթարող օբյեկտի վերարժևորում:

VII. *Կազմավորված պատմական միջավայրի պահպանում և համալիր վերարժևորում* – նոր ճարտարապետական համալիրների ստեղծում, պատմական կառույցների պահպանում և միավորում նորերի հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետազոտության արդյունքում արձանագրվել է, որ պատմական քաղաքների կամ առանձին հատվածների միջավայրի վերարժևորումն այսօր ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի և դիմագծի պահպանման, ճարտարապետական, հորինվածքային և գործառնական արժեքների «վերակենդանացման» ամենաարդյունավետ միջոցներից է:

2. Բացահայտվել են ք. Երևանի «Փոքր կենտրոնի» ճարտարապետատարածական միջավայրի արդիականացման և վերարժևորման արդի փուլի հիմնական պայմանները.

- վերակառուցում, վերափոխում, արդիականացում՝ պատմական կառույցների ամբողջական կամ մասնակի վերացման արդյունքում,
- տարածքի ամբողջական վերափոխում՝ պատմական կառույցների հիմնովին վերացման արդյունքում,
- տարածքի վերարժևորում՝ պահպանելով պատմական կառույցների միայն ճակատները և ավելացնելով շենքային նոր ծավալներ (ֆասադիզմ),
- նոր ճարտարապետական համալիրների ստեղծում, որտեղ պատմական կառույցները պահպանվում և միավորվում են նորերի հետ,
- պատմության և մշակույթի օբյեկտների պահպանում՝ նոր շենքային ծավալների ու կառույցների զուգորդմամբ,
- պատմական ժառանգության և շրջակա միջավայրի ամբողջությամբ պահպանում և ամբողջականության վերականգնում, ամրակայում և ռեվիտալիզացիա:

3. Առաջադրվել են ճարտարապետատարածական միջավայրի և քաղաքային լանդշաֆտի պատկերային բովանդակությանը վերաբերվող ֆիզիկական ձևերի բաղադրիչների վերարժևորման ենթակա օբյեկտների համակարգը և հիմնական մակարդակները՝ ըստ կողմնորոշող օբյեկտների, այն է՝ փոքր ճարտարապետական ձևերի վերարժևորում, շենքի առանձին բաղադրիչների վերարժևորում, առանձին շենքերի վերարժևորում, բակերի ամբողջական վերարժևորում, փողոցների ամբողջական վերարժևորում, թաղամասի կամ ճարտարապետական համալիրի վերարժևորում, պատմական կառուցապատումներով ուղղորդվող շրջանի վերարժևորում, վերականգնում:

4. Մշակվել և առաջադրվել է քաղաքների կամ դրանց առանձին հատվածների ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական որակի համալիր վերարժևորման մեթոդաբանությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտել վերարժևորման հիմնական սկզբունքները, չափանիշները և ուղղությունները՝ կախված միջավայրի առանձնահատկություններից: Մեթոդաբանությունը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից. վերարժևորման օբյեկտների բացահայտում, վերարժևորման օբյեկտների գնահատում և արժևորում, բազմագործոն գնահատում և իրավիճակային վերլուծություն, վերարժևորում:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հետևյալ գիտական աշխատանքներում

1. Սահակյան Մ.Վ., Մելիքյան Ա.Ա. Քաղաքային միջավայրում ավտոկայանատեղերի կազմակերպման խնդիրները և զարգացման հեռանկարները // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. – 2019. – Հ. III (74). – էջ. 80-86:
2. Սահակյան Մ.Վ. Չգործող արտադրամասերի ստեղծարար տարածությունների վերակազմակերպման հնարավորությունները Երևան քաղաքում // ՃՇՀԱՀ տեղեկագիր. – Երևան, 2020. – № 1 (66). – էջ. 27-37:
3. Սահակյան Մ.Վ. Ստեղծարար տարածությունները և դրանց կիրառման օրինակները Երևանում // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. – 2020. – Հ. I (76). – էջ. 112-121:
4. Ալոյան Ա.Ա., Սահակյան Մ.Վ. Երևանի կենտրոնի վերաարժևորման խնդիրները // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. - 2022. - Հ. 1 (82). – էջ. 3-10:
5. Sahakyan M., Aloyan A., Current Tendencies of the Yerevan Small Center Revaluation and Modernization // Proceedings of the 4th International Conference on Architecture: Heritage, Traditions and Innovations (AHTI 2022). - Athena Publishing, 2023. - pp. 383-389. – DOI: 10.55060/s.atssh.221230.052.
6. Sahakyan M. V. Aesthetic problems of revalorization of Yerevan "Small center" districts and landmarks // E3S Web of Conferences 371. 03030. - 2023. – 12 p. - DOI: 10.1051/e3sconf/202337103030.
7. Ալոյան Ա.Ա., Սահակյան Մ.Վ. Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» քաղաքային լանդշաֆտի վերաարժեվորման գեղագիտական խնդիրները // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. - 2023. - Հ.1(85). – էջ. 3-16. – DOI: 10.54338/18294200-2023.1-01
8. Սահակյան Մ.Վ. Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» ուղիների և հանգույցների ճարտարապետատարածական միջավայրի վերարժևորման գեղագիտական խնդիրները // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. - 2023. – Հ.II (86) (ներկայացված է տպագրության).

МЕСРОП ВАРДАНОВИЧ СААКЯН

ЭСТЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РЕВАЛОРИЗАЦИИ МАЛОГО ЦЕНТРА ЕРЕВАНА

РЕЗЮМЕ

Одним из наиболее актуальных вопросов современного Еревана является ревалоризация архитектурной среды его «Малого центра», поскольку наряду с созданием новых архитектурных комплексов, приоритетным становится повышение эстетического качества архитектурно-пространственной среды, обеспечение ее целостности и приспособление существующих зданий и сооружений к современным требованиям. Отмечено, что ревалоризация сегодня является одним из наиболее эффективных средств сохранения эстетического качества и облика архитектурно-пространственной среды, ревитализации архитектурно-художественного и функционального содержания исторических городов или их отдельных частей. С другой стороны, несмотря на наличие определенного зарубежного опыта и теоретических обоснований, в г. Ереване вопросы ревалоризации до сих пор решаются недостаточно эффективно из-за отсутствия единых комплексных подходов и оценок. Поэтому исследование было направлено на выявление современных задач совершенствования и улучшения эстетических качеств архитектурно-пространственной среды и разработку предложений по комплексной ревалоризации «Малого центра» г. Еревана. В связи с этим рассмотрен международный опыт архитектурно-пространственного развития и ревалоризации городских центров, выявлены особенности архитектурно-пространственного развития «Малого центра» г. Еревана, основные факторы, влияющие на эстетическое качество и условия охраны памятников и исторической среды.

На основе комплексной оценки современной ситуации по модернизации «Малого центра» г. Еревана, выявлены основные тенденции современного этапа ревалоризации его архитектурно-пространственной среды, а именно:

- негативная направленность, нежелательная с точки зрения сохранения исторической среды:
  - реконструкция, реорганизация, модернизация в результате полной или частичной ликвидации исторических построек,
  - реорганизация территории в результате полной ликвидации исторических построек,
- приемлемое направление, в тех случаях, когда историческая застройка разрушена или частично сохранилась:
  - ✓ ревалоризация территории за счет сохранения только фасадов исторических строений и добавления новых объемов застройки,

- ✓ сохранение объектов истории и культуры путем объединения новых объемов и строений,
- ✓ создание новых архитектурных комплексов, в которых исторические строения сохраняются и сочетаются с новыми,

- предпочтительное направление:
  - ✓ полное сохранение и восстановление целостности исторического наследия и среды или консервация.

Предложена система объектов, подлежащих ревалоризации, которые связаны с эстетическими качествами городского ландшафта Еревана и произведена классификация в соответсвии с выявленными физическими формам образного содержания: направления, контуры, районы, узлы, ориентирующие объекты.

Даны основные уровни ревалоризации эстетического качества архитектурно-пространственной среды: согласно выявленным ориентирующим объектам, а именно: ревалоризация малых архитектурных форм, ревалоризация отдельных компонентов и деталей зданий, ревалоризация отдельных зданий, комплексная ревалоризация дворов, комплексная ревалоризация улиц, ревалоризация района или архитектурного комплекса, охрана и комплексная ревалоризация исторически сформировавшейся среды. Разработана и предложена структурная модель объектов ревалоризации архитектурно-пространственной среды «Малого центра» города Еревана.

Многофакторный анализ объектов ревалоризации и выявление особенностей решения эстетических задач сочетались с ситуационным анализом внешних и внутренних воздействий на среду. В результате даны оценки возможного дальнейшего улучшения эстетического качества выделенных объектов, обусловленного архитектурно-эстетическими ценностями и композиционными закономерностями по четырем основным категориям: сильные стороны, слабые стороны, возможности ревалоризации и угрозы. Разработана и предложена методика комплексной ревалоризации эстетического качества архитектурно-пространственной среды городов и их отдельных частей и предложена модель комплексной реорганизации и ревалоризации г. Еревана Малого центра, включающая следующие основные этапы: выявление объектов ревалоризации, многофакторная оценка и ситуационный анализ с выделением внутренних и внешних влияний, ревалоризация.

MESROP VARDAN SAHAKYAN

AESTHETIC PROBLEMS OF YEREVAN SMALL CENTER REVALORIZATION

SUMMARY

One of the most pressing issues of modern Yerevan is the revalorization of the architectural environment of its “Small Center”, since along with the creation of new architectural complexes, the priority is to increase the aesthetic quality of the architectural and spatial environment, ensure its integrity and adapt existing buildings and structures to modern requirements. It is noted that revalorization, today, is one of the most effective means of preserving the aesthetic quality and appearance of the architectural and spatial environment, revitalization of the architectural, compositional and functional content of historical cities or their individual parts. On the other hand, despite the presence of certain foreign experience and theoretical justifications, in Yerevan the issues of revalorization are still not being resolved effectively due to the lack of unified integrated approaches and assessments. Therefore, the study was aimed at identifying modern tasks of improving the aesthetic qualities of the architectural and spatial environment and developing a proposal for the complex revalorization of the "Small Center" of Yerevan. In this regard, the international experience of architectural and spatial development and revalorization of urban centers is considered, the features of the architectural and spatial development of the "Small Center" of the city of Yerevan, the main factors affecting the aesthetic quality and conditions for the protection of monuments and the historical environment are identified.

Based on a complex assessment of the current situation in the modernization of the "Small Center" of Yerevan, the main trends of the current stage of revalorization of its architectural and spatial environment were identified, namely:

- negative direction, undesirable from the point of view of preserving the historical environment;
  - ✓ reconstruction, reorganization, modernization as a result of the complete or partial elimination of historical buildings,
  - ✓ reorganization of the territory as a result of the complete elimination of historical buildings,
- acceptable direction, in cases where the historical buildings are destroyed or partially preserved:
  - ✓ revalorization of the territory by preserving only the facades of historical buildings and adding new building volumes,
  - ✓ preservation of objects of history and culture by combining new volumes and structures,

- ✓ creation of new architectural complexes in which historical buildings are preserved and combined with new ones,
- preferred direction.
  - ✓ full preservation and restoration of the integrity of the historical heritage and environment or conservation.

A system of objects subject to revalorization, which are associated with the aesthetic qualities of the urban landscape of Yerevan, is proposed and a classification is made in accordance with the identified physical forms of figurative content: paths, edges, districts, nodes, landmarks.

The main levels of revalorization of the aesthetic quality of the architectural and spatial environment are given: according to the identified orienting objects, namely: revalorization of small architectural forms, revalorization of individual components and details of a building, revalorization of individual buildings, complex revalorization of courtyards, complex revalorization of streets, revalorization of a district or an architectural complex, protection and complex revalorization of the historically formed environment. A structural model of the objects of revalorization of the architectural and spatial environment of the "Small Center" of the city of Yerevan has been developed and proposed.

Multifactorial analysis of objects of revalorization and identification of features of solving aesthetic tasks were combined with a situational analysis of external and internal impacts on the environment. As a result, estimates of the possible further improvement of the aesthetic quality of selected objects due to architectural-aesthetic values and compositional regularities are given in four main categories: strengths, weaknesses, opportunities for revalorization and threats. A methodology for complex revalorization of the aesthetic quality of the architectural-spatial environment of cities and their separate parts was developed and proposed, and a model of complex reorganization and revalorization of the city of Yerevan Small Center was proposed, including the following main stages: identification of objects of revalorization, multifactorial assessment and situational analysis, highlighting internal and external influences, revalorization.